իբրև լուաւ Մարիամ, խնդութեամբ եմուտ ի յայրն եւ առեալ զմանուկն ի գիրկս իւր, ուրախութեամբ սրտիւ լցաւ, և գոհութեամբ օրհնէր և փառաւոր առնէր զԱստուած և լռութեամբ կայր անդ։ Եւ Յովսէփ մատամբն ցուցանէր զայրն ի հեռաստանէ, և մոգուցն խնդութեամբ հասեալ ի դուռն այրին, և տեսեալ ըզմանուկն յանբանից մսուրն և յերես անկեալ երկրըպագանէին նմա թագաւորքն և իշխանքն և մեծամեծքն, և այլ ամենայն զօրք բազմութեան ժողովոյն, և բերեալ մատուցանէին իւրաքանչիւր զնուէրս առաջի նորա։ Եկն յառաջ Գասպար թագաւորն Հընդկաց, և բացեալ զնարդոս մեծագին, զստաշխ, և ըզկասիայ, զկինամոն, զկնդրուկս եւ զայլ ծխանելիսն անուշահոտութեան իւղոց եւ խնկոց, և առժամայն հոտ անմահութեան ելից զայրն՝ յորում նստեալ էին անդ։ Իսկ Պաղտասար թագաւորին արաբացւոց բացեալ զգանձս մեծութեան իւրոյ, և տարեալ մատուցանէր առաջի նորա ոսկի և արծաթ(*), ակունք, մարգարիտ զեղեցիկ և շափիւղայ պատուական։ Իսկ Մելքոն թագաւորն Պարսից բերեալ զմուռն, հալուէս, զբեհեղս և զծիրանիս և զայլ կտաւս պատանաց։ Եւ իբրև մատուցին իւրաքանչիւր զընծայս իւրեանց ի պատիւ որդւոյ թագաւորին Իսրայէլի, յայնժամ յարուցեալ թագաւորին ի յայրէն առնէին բացուստ մեկուսի երեքեանն, և միաբանեալ երեքին նստան...։

(*) «Արդ երեսուն արծաթի ասէ, կամ թէ արծաթի էր դահեկան ժամանակին, կամ պակեր էր երեսուն արծաթի՝ որպէս ոմանք ասեն, զոր բերին մոգք Տեառն մերոյ, եւ Մարիամ ետ ընծայս Տանարին՝ յորժամ ընծայեցոյց զնա, զոր տեսեալ Յուդայի ցանկացաւ՝ եւ խնդրեաց. եւ փոխանակ զվարդապետն մատնեաց, որպէս ասի...։» (Ծոր. էջ 551),